Արձանագրություն N 3
N <<ՀՊԹ-ԳՀԱՊՁԲ-18/8>>
Ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան 30 նոյեմբերի 2018թ.

ժ.15:30

Հանձնաժողովի նախագահ՝

Վավիկ Հովհաննիսյան - տնտեսական գծով փոխտնօրեն

Հանձնաժողովի անդամներ ՝

Հրանտ Զարկչյան - Հեռահսկողական և ահազանգման օպերատոր

Դավիթ Պետրոսյան -կառուցանող

Հանձնաժողովի քարտուղար՝ Հայկանուշ Թովմասյան

Օրակարգ

հայտերի բացման և գնահատման նիստի մասին

1. Նիստը տեղի է ունեցել <<Հայաստանի պատմության թանգարան>> ՊՈԱԿ-ի շենքում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ 4:

2. Փաստաթղթերը ներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները

<<ՀՊԹ-ԳՀԱՊՁԲ-18/8>> ծածկագրով գնման ընթացակարգին որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթեր ներկայացրել են՝

2.1 <<ՄԱԿՐՈ ՏԵՔ>> ՍՊԸ, ՀՀ, Արարատի մարզ, գ. Տափերական, Կիլիկիայի փողոց, տուն 8, էլ. հասցեն՝ MacroTech.Armenia.LLC@gmail.com , Հեռ. +374 55711131, +374 91711141

3. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

3.1 <<ՄԱԿՐՈ ՏԵՔ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

4. Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն հանձնաժողովը որոշեց.

4.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 46-րդ կետի դրույթներով

1 <<ՄԱԿՐՈ ՏԵՔ>> ՍՊԸ-ի Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ ներկայացրած (եզրակացություն) հայտարարությունը համարել իրականությանը համապատասխանող, ինչպես նաև հրավերով <<ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ ներկայացրած հայտարարությունը համարել իրականությանը համապատասխան՝ արձանագրենք, որ գնահատող հանձնաժողովը <<ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշը գնահատելիս հաշվի է առել մասնակցի հայտը ներկայացնելու հաշվետու տարին և դրան նախորդ երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 3, դեմ – 0

4.2 **<<ՀՊԹ-ԳՀԱՊՁԲ-18/8>>** ծածկագրով ընթացակարգի 1-ին չափաբաժնի համար

առաջին տեղը զբաղեցնող է ճանաչվում <<ՄԱԿՐՈ ՏԵՔ>> ՍՊԸ-ն,

որպես ընթացակարգի բավարար գնահատված հայտ և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից, որի հետ առաջարկվում է կնքել պայմանագիր

4.3 <<**ՀՊԹ-ԳՀԱՊՁԲ-18/8**>> ծածկագրով ընթացակարգի 1-ին չափաբաժնի համար

երկրորդ տեղը զբաղեցնող է ճանաչվում <<ԱԷՍ ԹՐԵՅԴ>> ՍՊԸ-ն,

4.4 <<**ՀՊԹ-ԳՀԱՊՁԲ-18/8**>> ծածկագրով ընթացակարգի 1-ին չափաբաժնի համար

երրորդ տեղը զբաղեցնող է ճանաչվում <<Մեգա լիֆտ>> ՍՊԸ-ն,

4.5 "Գնումների մասին" ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում սույն հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

4.6 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 3, դեմ – 0

5 <u>Շահերի բախման բացակայության մասին</u>

<<**ՀՊԹ-ԳՀԱՊՁԲ-18/8**>> ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նշված ծածկագրով գնման ընթացակարգի որակավորման փաստաթղթերի գնահատման նիստից հետո հայտարարում է, որ հիշյալ ընթացակարգի առնչությամբ չունի շահերի բախում:

Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Վավիկ Հովհաննիսյան

Անդամներ՝ _____ Հրանտ Զարկչյան

_____ Դավիթ Պետրոսյան

Քարտուղար՝ _____ Հայկանուշ Թովմասյան